էր անկողնի վրայ, իսկ Ասլանը նստած էր նրա հանդէպ: Երկուսն էլ լուռ էին, երկուսն էլ մտածութեան մէջ էին: Դա, եթէ կարելի է այսպէս ասել, զինադուլի լռութիւն էր, որ տեղի է ունենում ջերմ վիճաբանութիւնից յետոյ: Համրը գլուխը դրել էր բարձերի վրայ եւ նայում էր առաստաղին: Նրա հազը կրկին սկսեց, նա բարձրացաւ, նստեց եւ յետոյ մի բան էր որոնում իր մօտ: Ասլանը գտաւ, տոեց նրան սպիտակ թաշկինակը, որ իսկոյն տարաւ դէպի բերանը: Երբ հեռացրեց թաշկինակը, ես նկատեցի նրա վրայ մի կարմիր բիծ: Մահոան պէս տխուր, յոյսի պէս խաբուսիկ էր այդ բիծը...

Բայց իմ խիղճը ինձ տանջում էր: Ինչպէ՞ս ծածկէի նրանից, ինչպէ՞ս չասէի սպասաւորի սենեակում պատահած անցքը: Ես բոլորը պատմեցի:

— Նա այդպիսի խենթութիւններ շատ ունի, — ժպտալով ասաց Համրը: — Նա իր հայրենիքի հարազատ զաւակն է... Իր խենթութիւններով շատ անգամ զոարճացնում է ինձ:

— Յետոյ ինչո՞ւ կրկին չպատրաստեց սուրճը, — հարցրեց Ասլանը:

— Ասաց՝ աստոած չկամեցաւ, եթէ աստոած կամենար, սրճամանը չէր վիթոի, — պատասխանեցի ես:

— Նա միայն չէ, որ այդպէս է մտածում, Ֆարհատ, — խօսեց Համրը, դառնալով դէպի ինձ, — ամբողջ ժողովուրդներ կան, որ այդպէս են մտածում. իրանք իրանց տգիտութեամբ վիթում են իրանց բախտի անօթը եւ պատճառը աստծոյ վրայ են դնում:

Համրի կացարանից փոքր-ինչ հեռու մի այլ խուց պատրաստել էին իմ եւ Ասլանի համար: Մենք չկամեցանք երկար ձանձրացնել նրան, գնացինք մեր խուցը: Դուրս գալու միջոցին նա հարցրեց Ասլանից:

— Առաւօտեան, ի հարկէ, կրին կը տեսնոենք:

— Կը տեսնոենք, — պատասխանեց Ասլանը:

Այդ վերջին գիշերն էր, որ ես եւ Ասլանը պէտք է միասին անցկացնէինք: Առաւօտեան նա գնալու էր մի հեռու, շատ հեռու ճանապարհ... Ո՞վ գիտէ, միւս անգամ ես բախտ կունենայի՞ տեսնելու նրան... Ես պատրաստ կը լինէի կեանքս տալ, եթէ այդ միակ գիշերը երկարէր, շատ երկարէր, տարիներ դառնար, որ նրա մօտ լինէի, նրա վրայ նայէի եւ նրա խօսքերը լսէի: Այդ էր պատճառը, որ ես նրան հանգստութիւն չտոի եւ, երբ մտանք մեր խուցը, անդադար նոր եւ նոր հարցերով ձանձրացնում էի նրան, չնայելով որ Համրի սենեակից դուրս գալուց յետոյ նա խիստ տխուր տրամադրութեան մէջ էր գտնուում: Երեւում էր, որ սիրելի բարեկամի տկարութիւնը տանջում էր նրան: